

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՈՉ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ
ԴԵՊՔԵՐԻ ԱՌԹԻՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Աշխատակարգը կարգավորում է սույն դրոշման N 3 հավելվածով թվարկված քրեական գործերի ուսումնասիրության նպատակով ստեղծված աշխատանքային խմբի (այսուհետ՝ աշխատանքային խումբ) գործունեության նպատակի, խնդիրների և աշխատանքի կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանքային խմբի գործունեության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայած զինծառայողների՝ ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի առնչությամբ հարուցված՝ սույն դրոշման N 3 հավելվածով թվարկված քրեական գործերը (այսուհետ՝ գործեր): Նշված գործերից յուրաքանչյուրով աշխատանքային խումբը կազմում և Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացնում խորհրդատվական եզրակացություն:

3. Աշխատանքային խմբի խնդիրներն են՝

1) վերհանել գործերի քննության ընթացքում քրեաիրավական և քրեադատավարական նորմերի ենթադրյալ խախտումները.

2) վերհանել քննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության ենթադրյալ խախտումները.

3) վերհանել քննության համար պատասխանատու անձանց կողմից թույլ տրված ենթադրյալ խախտումներն ու չարաշահումները:

4. Աշխատանքային խմբի գործունեությունը չի կասեցնում կամ որևէ կերպ սահմանափակում քննվող գործերի շրջանակներում տուժողների իրավահաջորդների կողմից իրենց իրավունքների իրականացումը, այդ թվում՝ գործերի քննության ընթացքում միջնորդությունների և առարկությունների ներկայացումը, քննչական կամ այլ դատավարական գործողություններին մասնակցությունը, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի,

դատարանի գործողությունների և որոշումների, այդ թվում՝ դատավճիռների և դատարանի այլ վերջնական ակտերի բողոքարկումը:

5. Աշխատանքային խմբի գործունեությունը չի կարող Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննվող գործերի շրջանակներում դիտվել որպես պետության կողմից գործերի քննությանն ուղղված արդյունավետ միջոց, և աշխատանքային խմբի գործունեության արդյունքները չեն կարող ազդել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների և որոշումների՝ պետության կողմից պատշաճ կատարման պարտականության վրա:

6. Աշխատանքային խմբի գործունեության ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սույն որոշման N 3 հավելվածում նշված՝ ուսումնասիրության ենթակա գործով խախտման արձանագրմամբ վճիռ կայացվելու դեպքում աշխատանքային խումբը դադարեցնում է տվյալ գործի ուսումնասիրությունը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Աշխատանքային խումբը կազմված է վեց անդամից՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի և սույն որոշման N 3 հավելվածով թվարկված գործերով տուժողների իրավահաջորդների երեք ներկայացուցիչներից: Աշխատանքային խմբի անհատական կազմը հաստատվում է սույն որոշման N 2 հավելվածով:

8. Աշխատանքային խմբի անդամն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, ինչպես նաև սույն աշխատակարգով:

9. Արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցները) միջամտությունը աշխատանքային խմբի գործունեությանը:

10. Աշխատանքային խումբը սույն աշխատակարգի 2-րդ կետով սահմանված խնդիրներն իրականացնելիս առաջնորդվում է նաև Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ գործող մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմինների իրավական դիրքորոշումներով:

11. Աշխատանքային խումրն իր գործունեության ընթացքում ստացված տեղեկատվությունը չի կարող օգտագործել խմբի գործունեության շրջանակներից դուրս, անձնական կամ մասնավոր այլ նպատակներով, հրապարակել դրանք կամ այլ կերպ հասանելի դարձնել հասարակությանը: Խմբի գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը պարբերաբար հանրությանը տեղեկացնում է աշխատանքների ընթացքի և միջնաժամկետ արդյունքների վերաբերյալ:

12. Աշխատանքային խումրն իր գործունեության շրջանակներում քրեական վարույթն իրականացնող մարմնի աջակցությամբ կարող է ստանալ իր կողմից ուսումնասիրության ենթակա քրեական գործերի պատճեններն ամբողջությամբ՝ բացառությամբ պետական գաղտնիք կազմող նյութերի, ինչպես նաև կարող է պետական իրավասու մարմիններ ուղարկել հարցումներ, ստանալ պատասխաններ, պարզաբանումներ:

13. Քրեական գործերում առկա փորձաքննության արդյունքների ոչ բավարար հիմնավորվածության կամ դրանցում դատավարական կանոնների ենթադրյալ խախտումների առկայության վերաբերյալ դիտարկումներն աշխատանքային խմբի կողմից ամրագրվում են խորհրդատվական եզրակացությունների մեջ:

14. Աշխատանքային խումրը յուրաքանչյուր գործով ուսումնասիրությունն սկսելուց առաջ և գործով եզրակացությունը կազմելուց առաջ հանդիպում է տվյալ գործով տուժողի իրավահաջորդի (իրավահաջորդների) հետ:

III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

15. Աշխատանքային խումրը սույն աշխատակարգով նախատեսված քրեական գործերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունն ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացնում իր գործունեության և դրա արդյունքների մասին գրավոր խորհրդատվական եզրակացություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև բանավոր պարզաբանումներ: Եզրակացությունների համառոտ՝ նախաքննության կամ պետական գաղտնիք, ինչպես նաև անձնական տվյալ հանդիսացող տեղեկություններ չպարունակող տարբերակները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կողմից:

16. Եզրակացությունները կազմվում են աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի կողմից ուսումնասիրության առարկա յուրաքանչյուր գործի կապակցությամբ ներկայացված գրավոր կարծիքների հիման վրա: Եթե խնդրո առարկա որևէ հարցի վերաբերյալ խմբի անդամներին չի հաջողվում ձևավորել միասնական մոտեցում, ապա խորհրդատվական եզրակացությունների մեջ շարադրվում են խմբի անդամների կողմից գրավոր ներկայացված բոլոր կարծիքները:

17. Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խումբը կարող է իր կողմից վեր հանված առանձին հարցերի վերաբերյալ եզրակացություններն ուղարկել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1441-Լ որոշման N 1 հավելվածով նախատեսված Փաստահավաք հանձնաժողովին:

18. Աշխատանքային խմբի գործունեությունը դադարում է սույն որոշման N 3 հավելվածով թվարկված քրեական գործերի ուսումնասիրության և դրա արդյունքում կազմված բոլոր գրավոր խորհրդատվական եզրակացությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև բանավոր պարզաբանումները Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելուց հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2020 թ.
օգոստոսի 3-ի N 888 - Ն
դրոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ

ՈՉ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ
ԴԵՊՔԵՐԻ ԱՌԹԻՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

- | | |
|--------------------|--|
| Աննա Վարդապետյան | - ՀՀ վարչապետի օգնական |
| Արայիկ Պապիկյան | - փաստաբան, արտոնագիր թիվ 970 |
| Դավիթ Գյուրջյան | - փաստաբան, արտոնագիր թիվ 1897 |
| Զարուհի Մեջլումյան | - փաստաբան, արտոնագիր թիվ 2511 |
| Լալա Բեգոյան | - ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական
վարչության մասնագետ |
| Պետիկ Մկրտչյան | - ՀՀ արդարադատության ակադեմիայի գիտահետա-
զոտական և ծրագրամեթոդական աշխատանքների
կազմակերպման բաժնի ղեկավար: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հավելված N 3
 ՀՀ վարչապետի 2020 թ.
 օգոստոսի 3-ի N 888 - Ն
 որոշման

Ց Ա Ն Կ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ
 ՈՉ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
 ՄԱՀՎԱՆ ԴԵՊԲԵՐԻ ԱՌԹԻՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ

Ը/Ը	Զինձառայող	Գործի համար
1.	Տիգրան Սուրենի Օհանջանյան	90603807
2.	Լևոն Արսենի Թորոսյան	90753018
3.	Վալերիկ Ազատի Մուրադյան	90951310
4.	Արթուր Սումբատի Ղազարյան	90150611
5.	Արման Հովսեփի Մուրադյան	90857913
6.	Արսեն Արթուրի Մխիթարյան	90757016
7.	Անդրանիկ Արմենի Մկրտչյան	90556717
8.	Էմիլ Գագիկի Մաթևոսյան	90404996

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ